Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, ուստի հայցի բավարարման պայմաններում Դատարանը գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել 180.000 (մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատարանը, նկատի ունենալով նաև, որ քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ դատական ծախսեր առկա չեն, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հայցի ապահովման միջոցի մասով Դատարանն արձանագրում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Դատարանի 25.08.2023 թվականի որոշմամբ հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին բավարարվել է, հայցի ապահովման միջոց կիրառելու նպատակով արգելվել է պատասխանող Երևանի քաղաքապետարանին իր կարիքների համար Երևան քաղաքում ճանապարհային նշանների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով գնման գործընթաց նախաձեռնել մինչև սույն քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը: Հայցը բավարարելու մասին վճռի կայացումից հետո հայցի ապահովման միջոցը դատարանի որոշմամբ կարող է վերացվել հայցի ապահովում պահանջած անձի միջնորդությամբ:

Հայցի բավարարման պայմաններում Դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 25.08.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել մինչև վճռի կատարումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի՝ 06.02.2023 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/10 գնման պայմանագրի շրջանակներում աշխատանքի և ապրանքի 10 տարի երաշխիքային ժամկետով բանկային երաշխիք պահանջելուն ուղղված գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

1.1. Ոչ իրավաչափ ճանաչել պատվիրատու Երևանի քաղաքապետարանի գործողություններն ուղղված թիվ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/10 գնման պայմանագրի շրջանակներում աշխատանքի և ապրանքի 10 տարի երաշխիքային ժամկետով բանկային երաշխիք պահանջելուն:

1.2. Ոչ իրավաչափ ճանաչել Երևանի քաղաքապետարանի գործողությունը՝ ուղղված թիվ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/10 գնման պայմանագրի շրջանակներում 30.06.2023 թվականի պայմանագիրը միակողմանի լուծելուն:

1.3. Անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Լևոն Հովհաննիսյանի 06.07.2023 թվականի թիվ 1963-Ա որոշումը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ «ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերության բռնագանձել 180.000 (մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 25.08.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի կատարումը:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ